ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«3» փետրվարի 2021 թ. № 95-Լ

ՀՐԱՄԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2215-Ն որոշման 17-րդ կետը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ի մասի 6-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝

1) փորձաքննությունների կատարման ծառայությունների միավորի նախահաշվային արժեքը և ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների տեսակների՝ համաձայն հավելվածի.

2) որ փորձաքննությունների կատարման ծառայություններ ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի «04. Փորձաքննությունների ծառայություններ» միջոցառմամբ հատկացված միջոցների հաշվին փորձաքննությունների ծառայությունները ձեռք են բերվում «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ստացված՝ Հայաստանի Հանրապետության պետական

եկամուտների կոմիտեի ստորաբաժանումների՝ համապատասխան փորձաքննությունը նշանակելու մասին որոշումների կամ հայտերի հիման վրա.

3) փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը՝ 2021 թվականի համար՝ 465 դրամ.

4) որ 2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն տվյալ միջոցառմանը հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում իրավասու է փոփոխելու սույն հրամանի հավելվածով սահմանված փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակը՝ ըստ փորձաքննությունների առանձին տեսակների, եթե ըստ այդ տեսակների նշանակված փորձաքննությունների փաստացի քանակը կամ տեսակը չի համապատասխանի հավելվածում նախատեսվածին:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2/3/2021

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի

<< 3 >> փետրվարի 2021թ.

N 95-լ հրամանի

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Փորձաքննության տեսակը	Միավորի նախահաշվային արժեքը (դրամ)	Քանակը (հատ)	Ընդամենը՝ նախահաշվային արժեքը (դրամ)
Շինարարատեխնիկական	27900	60	**1674000**
այդ թվում՝			
- շինարարատեխնիկական	27900	45	1255500
- անշարժ գույքի գնահատման	27900	15	418500
Տնտեսագիտական	83700	89	**7449300**
այդ թվում՝			
- հաշվապահական	83700	80	6696000
- ֆինանսատնտեսագիտական	83700	9	753300
Ապրանքագիտական	13950	124	**1724000**
այդ թվում՝			
- ապրանքի գնահատում	13950	80	1116000
- գույքի վնասի չափի որոշում	13950	44	608000
Ընդամենը		**273**	**10847300**